



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 06 » հունիսի 2023թ.

### Հ Ր Ա Մ Ա Ն N 247-շհ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 210-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» կետի 2-րդ պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածի պահանջները և հաշվի առնելով, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 210-Ա հրամանով «Հայկական ավիաուղիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ավիաընկերություն) 2023 թվականի հունիսի 2-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածի համար Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ երթուղով տրված թույլտվության հիման վրա Ավիաընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային առաջին փոխադրումն իրականացվելու է 2023 թվականի հունիսի 30-ին՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 210-Ա հրամանի 2-րդ կետի «սույն կետում նշված երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական

տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2022 թվականի փետրվարի 2-ը՝ ամիսների նվազման կարգով՝ 20 ամիս ժամկետով Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/ ուղղության համար» բառերը փոխարինել «սույն կետում նշված երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետով սահմանված արտոնության սկիզբ համարել 2023 թվականի հունիսի 30-ը՝ ամիսների նվազման կարգով՝ մինչև 2025 թվականի փետրվարի 2-ը՝ հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 24-Ա հրամանը» բառերով:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը Կոմիտեի կայքում:

3. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի վերաբերյալ տեղեկացումը Ավիաընկերությանը:

6/6/2023

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ